



Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ



Սույն հրապարակումն իրականացվել է «Քաղաքացիական հասարակություն: Երկխոսություն հանուն առաջընթացի» ծրագրի շրջանակներում, Եվրոպական միության օժանդակությամբ: Հրապարակման մեջ եղած կարծիքները կարող են չհամընկնել Եվրոպական միության պաշտոնական տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	12
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացրել են Երեւանի մամուլի ակումբը եւ Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարությունը՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակություն: Երկխոսություն հանուն առաջընթացի» ծրագրի աջակցությամբ:

Հետազոտության նպատակն է՝ ընդլայնել քաղաքացիական հասարակության (ՔՀ) մասնակցությունը իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը՝ որպէս քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման ժողովրդավարական, թափանցիկ եւ հաշվետու գործընթացների ապահովման հիմնական բաղադրիչ:

Ծրագրով խնդիր է դրվել հետազոտել եւ գնահատել քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման գործում Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավվածության մոդելները: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել առաջարկություններ եւ խորհուրդներ տալ, թե ինչպէս կարելի է բարձրացնել քաղաքացիական հասարակության դերը բարեփոխումների գործընթացում, հատկապէս՝ ԵՄ-Հայաստան համագործակցության շրջանակներում:

Գնահատման հատուկ նպատակներն են.

ա) Ստանալ քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման գործում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ների) ներգրավվածության առավել հստակ պատկերը:

բ) Գնահատել ՔՀԿ-ների աշխատանքի ձեռքբերումները, համարժեքությունը, արդյունավետությունը եւ արդյունքները, ինչպէս նաեւ՝ մեկտեղել քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման գործում ՔՀ-ի մասնակցության լավագույն փորձը:

գ) Բացահայտել հնարավորությունն տվող եւ բացառող այն գործոնները, որոնք ազդում են բարեփոխման գործընթացներում արդյունավետ դերակատարություն ունենալու՝ ՔՀԿ-ների պատրաստակամության եւ կարողության վրա:

դ) Քննարկել համապատասխան ռազմավարական աջակցության առավելությունները եւ թերությունները:

ե) Գնահատել հանրային եւ լրատվական միջավայրը, որը Հայաստանի քաղաքացիական հասարակությանը ի վիճակի է դարձնում սոցիալ-քաղաքական կյանքի գանազան ոլորտներում լինել ազդեցիկ գործոն:

զ) Առաջարկություններ տալ՝ քաղաքացիական հասարակության եւ իշխանությունների միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության գործում ՔՀԿ-ներին հետագա աջակցության վերաբերյալ:

Հետազոտությունն այնպես է մշակվել, որ դրա համապարփակ շրջանակը ներառում է շահագրգիռ կողմերին եւ ոլորտի փորձագետներին: Այն կառուցվել է հետեւյալ մեթոդների հիման վրա՝

- քաղաքացիական հասարակության եւ իշխանությունների միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության տարբեր ասպեկտներին եւ գործիքներին նվիրված **խորացված որակական հարցազրույցներ** իրավասու գործիչների հետ (կառավարություն, ՔՀ ներկայացուցիչներ, հասարակագետներ, մտավորականներ, լրագրողներ),
- **Ֆոկուս խմբերի քննարկումներ** քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու քաղաքացիական հասարակության եւ իշխանությունների միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մոդելները, իմանալու առկա պատկերացումները՝ ՔՀ-ի մասնակցության արդյունավետության մակարդակի մասին, ՔՀ-ի եւ իշխանությունների միջեւ կառուցողական երկխոսությանը խանգարող գործոնները, ինչպես նաեւ՝ ՔՀ մասնակցությունը բարելավելու առաջարկներ կատարել:

Ֆոկուս խմբերում ներգրավվել են՝

- ոլորտային ՀԿ-ների ներկայացուցիչներ (մարդու իրավունքներ, ժողովրդավարական կառավարում, հավասար հնարավորություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն եւ այլն),
- հանրային կառույցներին կից հանրային խորհուրդների, մտավորական եւ լրատվական շրջանակների ներկայացուցիչներ,
- ՀԿ-ների ցանցերի եւ դաշինքների ներկայացուցիչներ,
- Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի անդամներ,
- ոչ ֆորմալ նախաձեռնությունների, շարժումների մասնակիցներ:

Հետազոտության հատուկ բաղադրիչներից է **ՋԼՄ-ների մոնիտորինգը**, որը միտված էր ուսումնասիրելու իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության գործում քաղաքացիական հասարակության ակտիվության եւ ներգրավվածության լուսաբանումը, ինչը որոշ չափով ցուցադրում է այն կարեւորությունը, որ տրվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտին՝ հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

2015թ. մարտին անցկացված մեկամսյա մոնիտորինգը, որն ընդգրկում էր 6 առաջատար լրատվամիջոցներ, պարզեց հետեւյալը.

- քաղաքացիական հասարակության գործունեությանը անդրադարձների հաճախականությունը եւ դինամիկան,
- քաղաքացիական հասարակության մասնակցության օրինակներ,
- այն գործոնները, որոնք ազդում են քաղաքացիական հասարակության նկատմամբ լրատվամիջոցների ուշադրության եւ վերաբերմունքի վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Ծրագրի շրջանակներում 2015թ. մարտի 1-10-ն անցկացվել են խորացված հարցազրույցներ:

Տասնհինգ հարցից կազմված հարցաշարին պատասխանել են հետևյալ խմբերի 20 ներկայացուցիչներ՝ ՀՀ կառավարություն եւ իշխող կուսակցություն, ընդդիմադիր կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, լրագրողներ եւ մտավորականներ: Հետագայում, հարցվածների պատասխանները ամփոփվել են, վերլուծվել եւ համադրվել ֆոկլուս խմբերում քննարկումների, ինչպես նաեւ ԶԼՄ-ների մոնիտորինգի արդյունքների հետ:

Հարցազրույցների մասնակիցների ցուցակը՝ Հավելված 1-ում:

Հարցաշարում ներառվել են հետևյալ հարցերը՝

1. Հայաստանում ո՞ր ոլորտներում եք տեսնում իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության (Policy Dialogue-ի) հնարավորություն:
2. Երբեւէ մասնակցե՞լ եք իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության որեւէ ձեռնարկի: Ձեր փորձը այս ոլորտում:
3. Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ նախկինում արդյունավետ համագործակցության ի՞նչ օրինակներ կարելի է բերել: Հաջողության պատմություններ:
4. Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության՝ ներկայիս որեւէ գործընթացից տեղյա՞կ եք:
5. Ինչպե՞ս եք գնահատում ՀՀ-ում իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությունը:
6. Ինչպե՞ս կգնահատեք պետական մարմինների հաշվետվողականությունը հանրությանը:

7. Տեղյա՞կ էք, թե՞ ինչ իրավական եւ պայմանագրային ակտերով է ապահովվում ՀՀ-ում իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությունը: Եվ արդյո՞ք միայն դրանք բավարար են՝ ապահովելու իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությունը:
8. Հանրային գիտակցությունը եւ ազգային առանձնահատկությունների դերը՝ դրական կամ բացասական ազդեցությունը իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության խթանման գործում:
9. Հանրաքվեն որքանո՞վ կարող է համարվել հանրային մասնակցություն որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացների:
10. Հանրահավաքները համարո՞ւմ էք քաղաքացիական ակտիվության եւ հանրային խնդիրների վերհանման արդյունավետ հարթակ: Իսկ քաղաքացիական ակտիվիստների փողոցային ակցիանե՞րը:
11. Արդյո՞ք ուժային կառույցների կոշտ գործողությունները հանրահավաքների ժամանակ եւ այլախոհների նկատմամբ ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող բռնությունները չեն լռեցնում հանրության ձայնը:
12. Ազգային ժողովը արդյո՞ք կարողանում է ընտրողների հետ հանդիպումների միջոցով իրականացնել երկխոսության եւ որոշումների կայացման մասնակցայնության ապահովման՝ իր ունեցած մանդատը:
13. ԶԼՄ-ները որքանո՞վ են կարելորդում իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության խնդիրը:
14. Հանրային խորհուրդների գործունեությունն ինչպե՞ս կգնահատեք:
15. Տեղյա՞կ էք իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության հարցում այլ երկրների փորձին՝ հաջող կամ ոչ: Ինչն է հնարավոր մեզ մոտ, ինչը՝ անհնար, ինչն է՝ նպատակահարմար, ինչը՝ ոչ՝ փոխառել այլոց փորձից:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Ծրագրի շրջանակներում 2015թ. մարտի 11-20-ը նախատեսվել է իրականացվել են քննարկումներ 5 առանձին ֆոկուս խմբերի հետ (ընդհանուր թվով՝ 30 հոգի, 6-ական՝ յուրաքանչյուր խմբում), որոնցում ներառվել են Հայաստանի հանրային կյանքի տարբեր ոլորտներում որոշակի դերակատարություն ունեցող քաղաքացիական խմբերի,

կառույցների եւ շարժումների ներկայացուցիչներ, լրագրողներ, մտավորականներ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող անհատներ:

Ֆոկուս խմբերում քննարկումների թեմաները որոշելիս հիմք են ընդունվել խորացված հարցազրույցների համար կազմված հարցաշարերով անցկացված անհատական փորձագիտական հարցազրույցների ամփոփ արդյունքները: Փորձ է արվել առավել ազատ եւ անկաշկանդ միջավայրում, խմբային քննարկումների միջոցով վեր հանել ՀՀ-ում որոշումների կայացման եւ քաղաքականության մշակման գործընթացներին հանրային մասնակցության ապահովմանն առնչվող խնդիրները, իմանալ հանրային այս կամ այն խմբի կարծիքը իշխանություն-հասարակություն երկխոսության հնարավորությունների մասին:

Այնուհետեւ, ֆոկուս խմբերում իրականացված քննարկումների արդյունքները սղագրվել են, խմբագրվել եւ բոլոր արտահայտված կարծիքները պատասխանները համադրվել են խորացված հարցազրույցների պատասխանների, ինչպես նաեւ ՁԼՄ-ների մոնիտորինգի հետ՝ հանրային կարծիքի ընդհանուր պատկերն ի հայտ բերելու եւ դրանց հիման վրա եզրակացություններ եւ առաջարկություններ կատարելու նպատակով:

Ֆոկուս խմբերի կազմերը՝ Հավելված 2-ում:

ՁԼՄ-ՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Հայաստանյան ՁԼՄ-ներում իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ (civil society engagement in the policy dialogue) լուսաբանման մոնիտորինգն անցկացվել է Երեւանի մամուլի ակումբի կողմից, 2015թ. մարտի 1-31-ը:

Ուսումնասիրության նպատակն էր՝ քանակական տվյալներ ստանալու միջոցով կատարել որակական վերլուծություն եւ պարզել, թե հայաստանյան ՁԼՄ-ները որքան ակտիվ եւ ինչ շեշտադրումներով են լուսաբանում ՔՀԿ-ների գործունեությունը եւ քաղաքականության համաձայնեցման շուրջ նրանց երկխոսությունը:

Մոնիտորինգի ենթարկվել են Հայաստանի 6 ՁԼՄ-ներ, 3 համազգային հեռուստաալիք՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (Հ1), «Արմենիա», «Երկիր Մեդիա» հեռուստաալիքներ, 3 առցանց ՁԼՄ՝ «Առավոտ» օրաթերթի առցանց տարբերակը (<http://www.aravot.am>), Lragir.am (<http://www.lragir.am>), News.am (<http://www.news.am>):

Մոնիտորինգի ուսումնասիրության առարկա են դարձել՝ հեռարձակվող ՁԼՄ-ներում՝ վերոնշյալ հեռուստաալիքների լրատվական ծրագրերի հիմնական թողարկումները, վերլուծական-լրատվական եւ հասարակական-քաղաքական հաղորդումները (թոքշոու, «հյուր տաղավարում» ձեւաչափ եւ այլն), որոնք էթեր են դուրս գալիս ժամը 19.00-ից մինչեւ 24.00, բացառությամբ՝ առեւտրային/քաղաքական/սոցիալական գովազդի եւ հայտարարությունների, միջծրագրային անոնսների, վազող տողի, առցանց ՁԼՄ-

ներում՝ վերոնշյալ առցանց հրատարակություններում՝ բոլոր արխիվացված նյութերը (նախորդ օրվա), բացառությամբ՝ առևտրային/ քաղաքական/սոցիալական գովազդի եւ հայտարարությունների, «մաքուր» լուսանկարների (հրապարակումներից դուրս եւ առանց վերնագրերի, տեքստերի):

Մոնիտորինգի անցկացման մեթոդաբանությունը

Ուսումնասիրության հիմնական միավորը հեռուստանյութն է եւ առցանց նյութը:

Մոնիտորինգի ընթացքում պարզվել եւ ֆիքսվել է՝

1. Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը:
2. Նյութերում Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (ՀԿ-ներ, դրանց դաշինքներ, խմբեր, այդ թվում՝ ոչ ֆորմալ, քաղաքացիական ակտիվիստներ/առանձին քաղաքացիական ակտիվիստներ, արհմիութենական միավորումներ, գործատուների եւ գործարարների ասոցիացիաներ եւ այլ) հիշատակումների քանակը եւ բնույթը (դրական, բացասական կամ չեզոք):
3. Նյութերում ակտուալ թեմատիկային անդրադարձների քանակը եւ դրանցում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը:

Ընտրվել են մոնիտորինգի անցկացման ժամանակահատվածում առավել հրատապ եւ քաղաքականության համաձայնեցման տեսանկյունից առավել քննարկվող մի շարք թեմաներ.

- 1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ (2015թ. ապրիլի 24),
- Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ,
- Հայաստանի եվրասիական ինտեգրում,
- ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն,
- Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն,
- «Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց:

Որոշվել է վերը թվարկված թեմաներին անդրադարձերի քանակը հետազոտվող նյութերում, ինչպես նաեւ՝ թե արդյո՞ք այդ նյութերում որեւէ կերպ հիշատակվում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները (նրանց դերը, խնդիրները, կարծիքները, դիրքորոշումները):

Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութերի քանակը (քաղաքացիական

հասարակության ներկայացուցիչների եւ պետական կառույցների հանդիպումների, համատեղ նախագծերի եւ միջոցառումների մասին տեղեկատվություն, հայտարարությունների մեջբերում, այդ կարգի երկխոսության հետ կապված գործունեության նկարագրություն եւ այլն), եւ այդ նյութերում տեղեկատվության աղբյուրներ, որոնց շուրթերով խոսվում է այդ կարգի երկխոսության մասին (լրագրող, իշխանության ներկայացուցիչ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, միջազգային/դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ, այլ):

Մոնիտորինգի քանակական տվյալները ներկայացվել են ինչպես առանձին հետազոտված ՁԼՄ-ներով, այնպես էլ ընդհանրացնող աղյուսակներով՝ ըստ ՁԼՄ-ի տիպի (հեռարձակվող եւ առցանց) եւ բոլոր ՁԼՄ-ների հանրագումարային ցուցանիշներով *(տե՛ս Հավելված 3-ում բերված աղյուսակները):*

Ստացված տվյալների հիման վրա կատարվել է ՁԼՄ-ներում լուսաբանման որակական վերլուծություն, որն իր հերթին համադրվել է հարցազրույցների եւ ֆոկուս խմբերի քննարկումների արդյունքների հետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾԵԼՈՎ ԵՎ ՀԱՄԱԴՐԵԼՈՎ հետազոտության բոլոր բաղադրիչների արդյունքները, հնարավոր եղավ բացահայտել ինչպես հենց իրենց՝ հասարակական սեկտորի ներկայացուցիչների, այնպես էլ իշխանության, քաղաքական ընդդիմության, մտավորականության, ՁԼՄ-ների վերաբերմունքը՝ իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը քաղաքացիական հասարակության մասնակցության նկատմամբ: Ընդհանրացվել են այն ոլորտների նկատմամբ պատկերացումները, որտեղ որոշումների կայացմանը այս կամ այն չափով մասնակցել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ինչպես նաև՝ այդ մասնակցության ձևերի մասին պատկերացումները: Տրված է այն ինստիտուտների նկատմամբ գնահատականը, որոնք կոչված են ապահովելու որոշումների համաձայնեցումը/մշակումը, այդ գործընթացի օրենսդրական հիմքը եւ կառավարության հաշվետվողականության աստիճանը: Ներկայացված են հետազոտության մասնակիցների կարծիքները՝ բարեփոխումներում քաղաքացիական հասարակության մասնակցության վրա ազգային առանձնահատկությունների («ազգային մենթալիտետի») ազդեցության, առկա միջազգային փորձը Հայաստանում օգտագործելու հնարավորությունների մասին: Առանձին ուշադրություն է հատկացված իշխանությունների հետ քաղաքականության համաձայնեցման շուրջ հասարակական սեկտորի ներգրավվածության գործում ՁԼՄ-ների դերին եւ այդ դերի հասարակական գնահատականին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏՎԵԼ, որ դրանում ներգրավված հայ հասարակայնության սոցիալական բոլոր ակտիվ խմբերը (պետական կառույցների, քաղաքական ընդդիմության, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվամիջոցների, մտավորականության ներկայացուցիչները) մեծ նշանակություն են տալիս քաղաքականության մշակման/համաձայնեցման շուրջ երկխոսությանը (այսուհետ՝ երկխոսություն): Դատելով խորացված հարցազրույցների եւ ֆոկուս խմբերի քննարկումների ընթացքում հնչած տեսակետներից, նրանք բոլորը միակարծիք են, որ բոլոր ոլորտներում պետական արդյունավետ քաղաքականության իրականացումն անհնարին է՝ առանց իշխանության եւ հասարակության միջեւ երկխոսության: Միեւնույն ժամանակ, հարցվածներից նրանք, ովքեր իշխանության ներկայացուցիչներ են կամ կիսում են վերջիններիս տեսակետները, այս ոլորտում տիրող իրավիճակը գնահատում են զգալիորեն ավելի բարձր, քան հետազոտության մասնակիցներից նրանք, ովքեր քննադատական վերաբերմունք ունեն երկրում տիրող իրավիճակի եւ բարեփոխումների ընթացքի նկատմամբ: Ավելին, առաջինները երկխոսության կայացման խոչընդոտների առկայությունը համարում են բնական ժամանակավոր երեւոյթ, մինչդեռ երկրորդները հակված են դա բնորոշել որպես համակարգային հիմնախնդիր, որը չի կարող ինքն իրեն լուծվել եւ խորը վերափոխումներ է պահանջում:

Մասնավորապես, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները երկխոսության բացակայության կամ ոչ բավարար լինելու համար մեղադրում են իշխանություններին, իսկ վերջինների պատկերացմամբ՝ առկա թերությունները կհաղթահարվեն՝ քաղաքացիական հասարակության հետագա զարգացմանը

զուգընթաց: Իշխանական կառույցների ներկայացուցիչների մեծ մասի կարծիքով ՀԿ-ները հաճախ ոչ կոմպետենտ են, իսկ նրանց ընդիմախոսները ՀՀ իշխանություններին մեղադրում են ձեռնարկային երկխոսության հակված լինելու մեջ կամ քաղաքացիական հասարակության հետ համագործակցության պատրանք ստեղծելու համար:¹ Երկուստեք վստահության պակաս կա, բավականին քիչ են կառուցողական առաջարկությունները:

Հարցվածների մի մասը նշել է հայ հասարակության մեջ, ընդհանրապես, երկխոսության մշակույթի բացակայությունը, ըստ որում, միանգամայն տարբեր տեսակետներ հայտնելով այն մասին, թե ինչպես պիտի այն կայանա, որոնք են դրա առաջնահերթությունները: Իշխանությունները ներկայացնող հարցվածների մի մասը կարծում է, որ առանձին ոլորտներում (բնապահպանություն, մարդու իրավունքներ) ՔՀԿ-ները չափից դուրս արմատական են, իսկ հակադիր կողմն այդ արմատականությունը հիմնավորում է նշված ոլորտներում տիրող խիստ անհանդուրժելի իրավիճակով:

Ըստ գերակշռող կարծիքի, Հայաստանում իշխանություն-քաղաքացիական հասարակություն ձեռնաշփոխում քննարկումները որպես կանոն անցնում են «վերից վար հաղորդակցության սկզբունքով», այսինքն իշխանությունները պարզապես հայտնում են իրենց որոշումների կամ անելիքների մասին, լավագույն դեպքում՝ լսելով, բայց հաշվի չառնելով դիմացիների այլընտրանքային մտտեցումները եւ առաջարկությունները:

Ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները հայտարարում են քաղաքական ուժերի եւ քաղաքացիական հասարակության արհեստական հակադրման մասին, այնինչ միայն նրանց փոխգործակցության պայմաններում է ձեռավորվում այն ռեսուրսը, որը կարող է հակակշռել որոշումների կայացման իշխանությունների մենաշնորհին:

Մտավորականության ներկայացուցիչների մի մասը, որոշ չափով արտահայտելով նաեւ սովորական քաղաքացիները կարծիքները, նույնպես չի ցանկանում նշված տարանջատումը տեսնել, համարելով, որ միայն երկուսի հնարավորությունների մեկտեղման պայմաններում է հնարավոր արդյունքների հասնել: Սակայն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մեծ մասը ավանդաբար վերապահումներով է մոտենում կուսակցությունների հետ համագործակցությանը, եւ սույն հետազոտության շրջանակներում պարզապես չի անդրադարձել այդ հարցին: Մի կողմից, տարբեր գործոնների հետեւանքով Հայաստանում քաղաքական եւ քաղաքացիական միջավայրերի միջեւ ձեւավորվել է հստակ ջրբաժան, ինչն արտացոլված է նաեւ օրենսդրության մեջ: Մյուս կողմից կարելի է ենթադրություն անել, որ թեւեւ վերջին տարիներին քաղաքական ընդդիմությունը բազմիցս պատրաստակամություն է հայտնել ՀԿ դաշտի հետ սերտորեն համագործակցելու, բայց հետեւողական գործելակերպի դեֆիցիտը վերջիններին վանել է կուսակցություններից: Հետեւաբար, ելնելով այն հանգամանքից, որ խոսակցությունները հազվադեպ են

¹ Անգամ սույն հետազոտության շրջանակներում որոշ պաշտոնական անձանց՝ հարցազրույց տալու պատրաստակամության բացակայությունը վկայում է երկխոսության՝ որպես արդիական խնդրի նկատմամբ նրանց վերաբերմունքի մասին:

կոնկրետ գործնական արդյունքների վերափոխվում, բնական է, որ արդյունավետ երկխոսության հանդեպ վերաբերմունքը երկուստեք սառչում է:

Հետազոտության արդյունքները հաստատում են, որ բավական մեծ տարածում է գտնում այն կարծիքը, որ իշխանությունների վարած քաղաքականության վրա ազդելու հարցերում ՔՀԿ-ներն ավելի ազդեցիկ են, քան՝ քաղաքական ընդդիմությունը:

Բնորոշ ցուցանիշ կարելի է համարել հենց հարցման մասնակիցների՝ այդօրինակ երկխոսության մասնակցության փորձը: Խորացված հարցազրույցների 20 մասնակիցներից 16-ը նման երկխոսության մասնակցության փորձ ունեցել են: Ընդ որում, նրանցից 4-ի պարագայում այն ավարտվել է հիասթափությամբ կամ որոշակի անբավարարվածությամբ: Հարցազրույցները ցույց են տվել նաև, որ հարցվածներն այնքան էլ լավ տեղյակ չեն Հայաստանում երկխոսության նախադեպերի մասին: Հիմնականում նրանք տեղյակ էին այն երկխոսությունների մանրամասներից, որոնց անձամբ մասնակցել էին, կամ էլ՝ որոնք լայնորեն լուսաբանվել էին ՋԼՄ-ներով:

ԱՅՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ, որոնք խոչընդոտում են իշխանությունների հետ քաղաքացիական հասարակության երկխոսությանը, նշվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների՝ միմյանց հանդեպ ունեցած անվստահությունը, նրանց անկարողությունը (որոշ դեպքերում՝ նաև ցանկության բացակայությունը)՝ հանդես գալ միասնական դիրքորոշումներով: Ըստ երեւույթին, այստեղ իր դերն ունի նաև յուրատեսակ մրցակցությունը, իշխանությունների հետ հաղորդակցման առաջնությունն իրենց վերագրելու, այս կամ այն նախաձեռնության, այս կամ այն ոլորտում քաղաքականության վրա ազդելու «հեղինակային իրավունքն» ամրագրելու ձգտումը: Որոշ չափով դա ոչ միայն «մասնագիտական» ամբիցիաների, այլ նաև՝ հաճախ նման վարվելակերպը խրախուսող դոնորների համակրանքը շահելու համար մղվող պայքարի արդյունք է: Այդ տարանջատվածությունը, հետազոտության մասնակիցներից շատերի կարծիքով, իշխանություններին հնարավորություն է տալիս «համաձայնության գալ» (կամ էլ համաձայնության տպավորություն ստեղծել) ոչ կառավարական սեկտորի առավել «հարմար», «ոչ պրոբլեմային» (իմա՝ լոյալ) հատված հետ:

Նման պրակտիկան էլ՝ ավելի է խորացնում անվստահությունը քաղաքացիական հասարակության ներսում, նրա մի հատվածին մեղադրելով անկախ չլինելու, իշխանական կառույցներին ենթարկվելու մեջ («GONGO»-ի պիտակ), իսկ մյուսին՝ չափից ավելի քաղաքականացված լինելու, ոչ կառուցողական քննադատությունների եւ դեռ ավելին՝ «գրանտակերության», Հայաստանի հանդեպ անբարյացակամորեն տրամադրված արտաքին ուժերի շահերին ծառայելու համար:

Այդ ամենի արդյունքում ընդհանուր առմամբ հասարակության մեջ ընկնում է ՔՀԿ-ների հեղինակությունը, մանավանդ որ, սույն հետազոտության շրջանակներում անցկացված քննարկումների մասնակիցներից մեկի գնահատմամբ, «5 հազար ՀԿ-ից երեւի միայն 150-ն են իրականում գործում»:

Ցանցեր եւ դաշինքներ ներկայացնող ՀԿ-ները հենց դրանցում են տեսնում քաղաքացիական հասարակության ներսում առաջացող հակասությունները: Միեւնույն

Ժամանակ, այստեղ էլ պահպանվում է «գրպանի» ՀԿ-ների դոմինանտ դերի վտանգը, ինչը իշխանության ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս ցանցերը եւ դաշինքներն օգտագործել իրական քաղաքացիական հասարակության ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Փաստորեն, ՀԿ-ների դաշինքներ ձեւավորվում են, երբ միջազգային կառույցների կողմից Հայաստանում իրականացվող կամ աջակցվող ծրագրերի շրջանակներում պարտադրվում է քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը: Եվ առանձին դեպքերում վերելից ձեւավորվող այդ դաշինքները մասնակցայնության իմիտացիա են ստեղծում միայն: Միեւնույն ժամանակ, ցանցային համագործակցության դրական օրինակ են համարվում Օրհուս կենտրոնները, որոնք ստեղծվում են առանց իշխանական կառույցների մասնակցության, սակայն վերջիններս դրանց հետ համագործակցելու պարտավորվածություն ունեն:

ԲԱՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՎԱԾ Է ԱՅՆ ԿԱՐԾԻՔԸ, որ խնդիրների քաղաքականացումը խանգարում է արդյունավետ երկխոսությանը: Քաղաքացիական հասարակությանը, մասնավորապես, մեղադրում են այն բանում, որ շահագրգիռ քննարկումների փոխարեն դիմում են քաղաքական սադրանքների: Ըստ որում, չկա հստակ պատկերացում այն մասին, թե ինչ է նշանակում «քաղաքականացում». մինչդեռ քաղաքացիական հասարակության առաջնահերթությունների շարքում դասվող՝ մարդու իրավունքներին, ժողովրդավարական ազատություններին, արդար ընտրություններին, իրավական պետության կառուցմանը վերաբերող հարցերի բարձրացումն այս կամ այն կերպ հանգեցնում է քաղաքական քննարկումների: Քաղաքական համակարգին ուղղակիորեն չառնչվող այնպիսի թեմաները, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանությունը եւ կոռուպցիայի դեմ պայքարը, նույնպես հարուցում են սուր հակադրություն ոչ կառավարական սեկտորի ներկայացուցիչների շրջանում, եւ դրանցում շատ հազվադեպ են համաձայնության (կոնսենսուսի) գալիս:

Այլ կերպ ասած, կոնֆլիկտայնությունն է, որ ինչպես երկխոսության առկայության, այնպես էլ դրա բացակայության պարագայում, դրվում է «քաղաքականացում» հասկացության հիմքում: Իսկ դա երեւան է գալիս բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիական հասարակության անկախ ինստիտուտների դիրքորոշումը վերաբերում է իշխանական վերնախավի արմատական եւ երբեմն ոչ լեգիտիմ շահերին: Բացի այդ, երկխոսության սահմանափակումը միայն այն ոլորտներով, որտեղ այդ շահերին դիպչելու հավանականությունը բացառված է կամ նվազագույնի է հասցված, կնշանակի քաղաքացիական հասարակության առաքելությունը նեղացնել՝ մինչեւ անընդունելի փոքր մասշտաբների: Մյուս կողմից, չի կարելի չընդունել, որ լինում են դեպքեր, երբ քաղաքացիական հասարակության առանձին կազմակերպությունների խիստ քաղաքական հակումները խոչընդոտ են հանդիսանում փոխըմբռնման եւ արդյունավետ հաղորդակցության կայացման համար:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ են համարվում նաեւ Հայաստանում առկա սոցիալական բեւեռացումը, «միջին խավի»՝ որպես լայն առումով զարգացած քաղաքացիական հասարակության սոցիալական բազայի, թուլությունը: Եվ հենց դա է պատճառը, որ պատշաճ կերպով չի ձեւավորվում որոշումների կայացման գործում քաղաքացիների լայն մասնակցության ներքին պահանջարկ:

Թե՛ խորացված հարցազրույցների մասնակիցները, թե՛ բոլոր ֆոկուս խմբերի քննարկումների մասնակիցները նշել են երկխոսության խթանման գործում միջազգային հանրության եւ Հայաստանի միջազգային համագործակցության կարեւոր դերը: Մասնավորապէս, նշվել է, որ դրական տեղաշարժ է տեղի ունեցել 2009 թվականից սկսած (երբ տրվել է ԵՄ Արեւելյան գործընկերության նախաձեռնության մեկնարկը): Եթե մինչ այդ երկխոսությունը կրում էր ձեւական բնույթ, ապա վերջին տարիներին դրա արդյունավետությունը բարձրացել է (ստորեւ այդ թեման մանրամասնորեն ներկայացված է): Միեւնույն ժամանակ, բարեփոխումների իրականացման գործում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը հիմնականում արտաքին գործոններով (միջազգային ծրագրերով) պայմանավորելը լրջորեն մտահոգում է ՔՀԿ սեկտորի ներկայացուցիչներին: «Իշխանությունը գալիս է ՀԿ-ի մոտ միայն այն դեպքում, երբ դրսից մեծ փող բերելու պայմանը հանրային մասնակցությունն է լինում», - նշել է ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկը:

Քննարկումների մեկ այլ մասնակից, ընդհանրացնելով իշխանական կառույցների եւ քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջեւ երկխոսության հաստատմանը նպաստող գործոնները, նշել է. «Երբ անձնական շահերի համար քաղաքական հետեւանքները բացակայում են, երբ առկա է միջազգային գործընկերների պահանջը, կամ էլ, հակառակ դեպքում, առկա է խռովության բարձրացման վտանգ...»:

ԵԹԵ ՄԻՆՉԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԸ «խռովության» թեման հիմնականում դիտարկվում էր հետընտրական բողոքի ցույցերի համատեքստում, երբ իշխանությունը հակված չէր լինում փոխզիջման գնալ, եւ երկխոսություն, որպէս կանոն, տեղի չէր ունենում, ապա վերջին տարիներին գնալով ավելի հաճախ դա վերաբերում է ոչ ֆորմալ քաղաքացիական նախաձեռնությունների կազմակերպած ակցիաներին: Մասնավորապէս, սույն հետազոտության շրջանակներում հարցվածները հիշատակել են բողոքի ակցիաներն ընդդէմ հասարակական տրանսպորտի թանկացման, կուտակային կենսաթոշակային համակարգի, տաքսու վարորդների աշխատանքի պայմանների փոփոխության... Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցած ոչ իշխանական շրջանակների ներկայացուցիչները միտինգները, բողոքի փողոցային ակցիաները անվերապահորեն համարում են արդյունավետ: Փողոցային ակցիաների առանձնահատկությունների մասին խոսելիս հետազոտության մասնակիցներից մեկն այսպիսի համեմատություն է արել. «Երբ հինգ հազար մարդ ստորագրում է իշխանություններին ուղղված նամակի տակ, դա այնքան արդյունավետ չի լինում, որքան եթե հինգ հազար մարդ է հրապարակ դուրս գալիս»: Այլ կերպ ասած, իշխանությունների՝ քաղաքացիների հետ փոխգործակցության ինստիտուցիոնալիզացված արդյունավետ մեխանիզմների բացակայության պայմաններում միտինգները դառնում են ոչ միայն ընդունելի, այլ նաեւ՝ անհրաժեշտ: Դա, ըստ էության, ծայրահեղ միջոց է, սակայն Հայաստանում, հարցվածների մի մասի կարծիքով, մյուս բոլոր միջոցները կամ սպառել են իրենց, կամ էլ դրանց հանդէպ վստահությունն է կորել: Հատկանշական է, որ նույնիսկ փողոցային ակցիաների կողմնակիցներն են ընդունում, որ քաղաքացիական մասնակցության այդ ձեւերը, որոնք, որպէս կանոն, զուրկ են ռազմավարական տեսլականից, ռիսկային են եւ կարող են ենթարկվել մանիպուլյատիվ ազդեցությունների: Բացի այդ, իշխանությունները տիրապետում են բողոքի այդօրինակ դրսեւորումները «սառեցնելու/ջրելու»

փորձառությանը, այդ թվում՝ նաև իրավապահ մարմինների ուժային գործողությունների կիրառմամբ:

Միեւնույն ժամանակ, իշխանական կառույցների ներկայացուցիչները, ընդունելով այդօրինակ ակցիաներ կազմակերպելու՝ քաղաքացիների իրավունքը, ինչպես նաև այն փաստը, որ դրանք ժամանակ առ ժամանակ օգնում են որոշակի արդյունքների հասնել, այդուամենայնիվ, միանշանակ վերաբերմունք չունեն դրանց նկատմամբ: Նրանց մի մասի կարծիքով, երբ միտինգները քաղաքական են լինում, դրանք, որպես կանոն, ոչ թե կոնկրետ պրոբլեմներ լուծելու, բարեփոխումներ իրականացնելու խնդիր են դնում, այլ հետապնդում են գործող իշխանությունների փոփոխության կամ դրանց թուլացման նպատակ: Երբ նախաձեռնությունները կրում են զուտ քաղաքացիական բնույթ, դրանք նպաստում են սոսկ այսրոպեական արդյունքների ձեռքբերմանը, իսկ երբ անհրաժեշտ է լինում հետեւողական քայլեր ձեռնարկել լավագույն լուծումներ գտնելու ուղղությամբ, դրանք դառնում են ոչ այնքան օգտակար: Մասնավորապես, վերը հիշատակված՝ հասարակական տրանսպորտի թանկացման, կուտակային կենսաթոշակային համակարգի, տաքու վարորդների աշխատանքի պայմանների փոփոխության դեմ բողոքի ակցիաները կարողացան կանգնեցնել հասարակության դժգոհությունը հարուցած որոշ գործընթացներ, սակայն համապատասխան ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումների իրականացմանը չնպաստեցին:

Հետազոտության մասնակիցները տարակարծիք են եղել այն հարցում, թե կարելի է արդյոք հակամարտության բնույթ ստացող փողոցային ակցիաները երկխոսություն համարել: Հարցվածներն այդ հարցին տվել են ինչպես հաստատական (ամեն դեպքում դա հասարակության մի որոշակի հատվածի կամքը որոշումներ ընդունողներին հասցնելու միջոց է), այնպես էլ ժխտական (դրանք չեն բերում գիտակցված, փոխադարձաբար ընդունելի արդյունքների) պատասխաններ: Ըստ որում, մեծամասամբ համաձայն են այն հարցում, որ ճնշման տակ կատարված զիջումները միշտ չէ, որ հանգեցնում են լավագույն լուծման:

Այսպես, նաև հարցվածների մեծամասնությունը համաձայն է, որ քաղաքականության մշակման հարցում քաղաքացիների մասնակցության՝ ժողովրդավարական հասարակություններում ընդունված քաղաքակիրթ, «լեգիտիմ» ձևերը՝ ընտրությունները, իշխանության ներկայացուցչական մարմինները, հանրաքվեները, Հայաստանի պայմաններում էականորեն վարկաբեկված են:

ԸՍՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, հանրաքվեն ամենակարեւոր գործիքն է՝ ուղղակիորեն ներագդելու իշխանության իրականացման վրա: Տեղական հանրաքվեների մասին օրենսդրական փոփոխությունը եւ անցկացված այդպիսի առաջին միջոցառումները հույսեր արթնացրեցին, որ այդ գործիքը կսկսի կիրառվել: Մակայն այստեղ դեռեւս լուրջ խնդիրներ են մնում: Ցածր է քաղաքացիների վստահությունը կամարտահայտման այս մեխանիզմի նկատմամբ, ի տարբերություն ընտրությունների՝ քարոզչությունը հանրաքվեների շրջանակներում չի կարգավորվում, ներկայումս գործող՝ 25% մասնակցության շեմը բավարար չէ հանրային կարծիքի վերաբերյալ հետեւություններ անելու համար: Տվյալ ինստիտուտի զարգացման համար հետազոտության մասնակիցները կարեւորել են էլեկտրոնային քվեարկության ներդրումը, ինչպես նաև այնպիսի մեխանիզմների գործածումը, որոնք ավելի մեծ

հնարավորություններ կատեղծեն հանրաքվեներ անցկացնելու ոչ միայն իշխանության, այլ նաև քաղաքացիների նախաձեռնությամբ:

ՀՀ Ազգային ժողովը, հարցվածների մեծ մասի կարծիքով, չի կատարում իր գործառույթներից մեկը՝ ազգի ընտրյալների եւ լայն հասարակայնության հաղորդակցության հարթակ եւ խոսափող դառնալու գործառույթը: Հետազոտության մասնակիցներն իրենց դիտարկումներում նշել են, որ անգամ երբ ԱԺ պատգամավորները հանդիպում են ընտրողների հետ, նրանցից ստանում են զուտ անձնական, հաճախ էլ նյութական բնույթ կրող խնդրանքներ կամ պատգամներ: Որպես կանոն, բանը չի հասնում այս կամ այն ոլորտի քաղաքականության վերաբերյալ առարկայական քննարկումների, առավել եւս, որ, հարցվածների կարծիքով, հայ պառլամենտականներից միայն մի քանիսն են օժտված հասարակության հետ արդիական թեմաների շուրջ խոսելու պատրաստակամությամբ եւ կոմպետենտությամբ:

Հետաքրքիր դատողություն է արել հետազոտության մասնակիցներից մեկը, ասելով. «Միգուցե զարմանալի թվա, բայց եթե Ազգային ժողովում ՀՀԿ-ականը² նույն բանն ասի, «վերելների» համար դա այնքան ազդեցիկ չի հնչի, որքան, ասենք, Նիկոլ Փաշինյանի³ ասածը...»:

Այս արտահայտությունը ցույց է տալիս որոշակի հնարավորություն, որ ունեն ԱԺ պատգամավորները, ովքեր պատրաստ են խորհրդարանի ամբիոնն օգտագործել հասարակությանը հուզող հարցեր բարձրացնելու, ովքեր չեն խուսափում լայն հասարակայնության հետ շփվել եւ դրանով իսկ փորձում են օրենսդիր իշխանությունը դարձնել քաղաքականության համաձայնեցման/մշակման կարելու հարթակ: Սակայն, ինչպես արդեն նշվել է, այն քիչ մարդ է օգտագործում: Հետազոտության մի քանի մասնակցիների կարծիքով, պատգամավորը առնվազն ամիսը երկու անգամ պետք է հանդիպի իր ընտրողների հետ: Սակայն իրականում նման բան տեղի չի ունենում: Կան շրջաններ, որտեղ չգիտեն իրենց պատգամավորի անունը: Հարցազրույցների եւ քննարկումների ժամանակ հնչեց Հայաստանում խիստ տարածված այն կարծիքը, որ արդեն ընտրությունների ժամանակ է՛լ Ազգային ժողովի պատգամավորները, է՛ւ շատ ընտրողներ ամբողջությամբ «իրար հետ փակել են հաշիվները»: առաջինները բաժանել են «նախընտրական կաշառքները» հինգ հազար դրամի չափով, իսկ երկրորդներն այդ փողերը ստացել են իրենց ձայնի դիմաց: Ժողովրդի ընտրյալները ոչ մեկին այլեւս ոչինչ պարտք չեն:

Երկխոսության ձեւերից մեկը, որ բարձրացնում է խորհրդարանական աշխատանքի որակը, քաղաքացիական հասարակության, փորձագետների մասնակցությամբ լսումներն են: Ինչպես նշել է հարցվածներից մեկը, «խորհրդարանական լսումներին կոմպետենտ ՀԿ-ների մասնակցությունը բավական արդյունավետ է լինում»: Սակայն այդպիսի մասնակցությունը միշտ չէ, որ ապահովվում է: Մասնավորապես, Հայաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության ակտիվացմամբ հետաքրքրված

² Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ ՀՀ-ում իշխող կուսակցություն:

³ Ընդդիմադիր պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր խորհրդի անդամ: Հաճախ է հանդես գալիս կառավարության քննադատությամբ:

հասարակական կազմակերպությունների ներկայացվածությունը այն քննարկմանը, որը նախորդել էր ԱլԳ Ռիգայի գագաթնաժողովին⁴, խիստ սահմանափակ էր:

Բարեփոխումների գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության կարևոր ձևերից է նրա ներգրավվածությունը մոնիտորինգային գործունեության մեջ: Այնտեղ, որտեղ դա իմիտացիայի չի վերածվում, արդյունքն ակնհայտ է: Մասնավորապես, հետազոտության ընթացքում որպես դրական օրինակ բերվում էր ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում եւ մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի գործունեությունը: Այս նախադեպը ուշադրության է արժանի նրանով, որ խմբի ձեւավորման մեջ անմիջական մասնակցություն է ունեցել կառավարությունը, սակայն դրանում ընդգրկված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին տրված են ինքնուրույն գործելու բավարար հնարավորություններ:

ԿՈՆԿՐԵՏ ՈԼՈՐՏՆԵՐԻՑ, որոնցում հետազոտության մասնակիցները նշել են իշխանությունների հետ երկխոսության առկայության մասին, առավել հաճախ հիշատակվել են խոսքի եւ տեղեկատվության ազատության, բաց կառավարման համագործակցության, տեղական ինքնակառավարման, հասարակական կազմակերպությունների մասին օրենսդրության, հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքներին վերաբերող ոլորտները: Նշվել է, որ դրանցում ինչպես կառավարության կողմից է որոշակի պատրաստակամություն դրսևորվում, այնպես էլ ՔՀԿ-ներն են առանձնանում իրենց կոմպետենտությամբ: Միեւնույն ժամանակ կարծիք է հայտնվում, որ մեծ կարևորություն ունի ոչ այնքան պրոբլեմների քննարկման պատրաստակամությունը, որքան՝ գործնական արդյունքի հասնելու հնարավորությունը: Առանց դրա՝ անհնար է խոսել հնարավոր երկխոսության մասին: Մասնավորապես, վերը հիշատակված՝ Բաց կառավարման գործընկերությունը, չնայած դրանում քաղաքացիական հասարակության կոմպետենտ ներկայացուցիչների ներգրավվածությանը, գործնականում շատ քիչ բան է կարողացել փոխել Հայաստանում: Մինչդեռ Երեւանի քաղաքապետարանի եւ ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության հետ «Ունիսոն» հասարակական կազմակերպության համագործակցությունը նպաստել է հաշմանդամություն ունեցող 30 քաղաքացու աշխատանքի տեղավորման հարցի լուծմանը, մայրաքաղաքում ավելացել են թեքահարթակները:

Հարցվածների մի մասը տպավորված է նաեւ ոչ ֆորմալ քաղաքացիական նախաձեռնությունների հաջողություններով, որոնք ձեռք են բերվել ոչ թե իշխանությունների պատրաստակամության, այլ՝ բողոքի ակցիաների եւ ճնշումների շնորհիվ: Դա նախելատաջ վերաբերում է այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են քաղաքաշինությունը, հուշարձանների պահպանությունը, բնապահպանությունը: Անգամ այնպիսի հարցերում, ինչպիսիք են, օրինակ, «Նաիրիտ» գործարանի աշխատողներին չվճարված աշխատավարձերի վճարման կամ կենսաթոշակների խնդիրները, որտեղ իրենց ծանրակշիռ խոսքը պետք է որ ասեին իշխանությունների հետ երկխոսության ինստիտուցիոնալ կառույցները (առաջին հերթին՝ արհմիությունները), քաղաքացիներին ընդատաջ արված որոշակի քայլեր իշխանության կողմից

⁴ Անցկացվել է 2015թ. մայիսի 21-22:

ձեռնարկվեցին ոչ թե վերջիններիս նախաձեռնությամբ, այլ՝ հրապարակային բողոքի ակցիաների արդյունքում:

Սույն հետազոտության մասնակից իշխանական կառույցների ներկայացուցիչներն ընդունում են բացարձակապես բոլոր ոլորտներում իշխանություն-հասարակություն երկխոսության անհրաժեշտությունը, միաժամանակ, սակայն, բողոքում են որոշ հարցերում քաղաքացիական հասարակության կոմպետենտության պակասից, ինչն էլ, նրանց կարծիքով, անհնար է դարձնում արդյունավետ երկխոսության ծավալումը: Իսկ այնտեղ, որտեղ կան ակտիվ, սկզբունքային եւ գիտակ ՔՀԿ-ներ, նրանց հետ երկխոսության հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Մասնավորապես, նշվել է ազգային անվտանգության քաղաքականության ձեւավորման վերաբերյալ ՀԿ-ների տեղեկացվածության, սովյալ հիմնախնդրի մասին առանձնահատուկ գիտելիքների մակարդակի եւ նրանց ակտիվության ու ձգտումների միջեւ առկա անհամապատասխանությունը: Մինչդեռ, այդ հանգամանքը կարող է պայմանավորված լինել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ անկախ փորձագետների համար այդ ոլորտների մասին տեղեկատվության ծայրահեղ անմատչելիությամբ կամ առհասարակ փակ լինելով:

Իրենց կողմից, սույն հետազոտության մասնակից քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բերել են օրինակներ, երբ իրենց կոմպետենտության բարձր մակարդակն այնքան էլ չի օգնել կառուցողական երկխոսության կայացմանը: Դա վերաբերում է, մասնավորապես, բնապահպանական խնդիրներին, որոնցում եթե անգամ ինչ-որ ձեռքբերումների հասնում են, ապա դա լինում է պիկետների եւ կենտրոնական ու տեղական իշխանությունների հանդեպ ճնշման այլ ձեւերի կիրառման արդյունքում:

ՍՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ մեկն էլ դրա մասնակիցների կարծիքի վերհանումն է, թե որքանով է ՀՀ օրենսդրությունը նպաստում քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը (policy dialogue): Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ այդ ոլորտում հատուկ օրենքների անհրաժեշտություն չկա. բավական է ունենալ արդյունավետ օրենսդրություն հասարակական կազմակերպությունների, հանրաքվեների, տեղական ինքնակառավարման եւ այլնի մասին, եւ դա ոչ կառավարական սեկտորին հնարավորություն կտա մասնակցել որոշումների կայացմանը: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության շրջանակներում գոյություն ունեն ձեւաչափեր, որոնցում ենթադրվում է կառավարության եւ քաղաքացիական հասարակության միջեւ երկխոսության առկայությունը: Այդուհանդերձ, ինչպես նշում են հետազոտության մասնակիցները, քաղաքացիները, այդ թվում նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, բավարար չափով տեղեկացված չեն օրենքների եւ ՀՀ միջազգային պարտավորությունների մասին, կամ էլ միշտ չէ, որ կարողանում են արդյունավետ կերպով օգտվել իրենց իրավունքներից: Մասնավորապես, իրավական ակտերի վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված է հասարակության մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը, սակայն դա հաճախ կրում է իմիտացիոն բնույթ:

Հայաստանը ստորագրել է «Մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» Եվրոպական խարտիան, որը հնարավորություն է ընձեռում համայնքի անդամներին՝ անգամ 1-2%-ի ստորագրության հիման վրա ցանկացած հարց քննարկել ՏԻՄ ներկայացուցչական մարմնում՝ ավագանիում: Ստորագրահավաքին մասնակցության տարիքնային ստորին շեմն էլ 16 տարեկանն է: Բայց հարցման մասնակիցներին ոչ մի նախադեպ հայտնի չէր, որ որեւէ համայնքում օգտված լինեին այդ հնարավորությունից: Իսկ հիմնական պատճառը իրազեկված չլինելն է:

Միակ իրավական ակտը, որի ընդունման նպատակահարմարության մասին հիշատակվել է հետազոտության ընթացքում՝ Հանրային խորհրդի մասին օրենք է եղել: Հարցվածներից մեկի կարծիքով, հենց Հանրային խորհրդի մասին օրենքի բացակայությունն է պատճառը, որ, իր խոսքով՝ շատ անհրաժեշտ այդ մարմինն ընկալվում է որպես Հանրապետության նախագահի գրպանային խորհուրդ:

Ընդհանուր առմամբ, հանրային խորհուրդների վերաբերյալ հարցումներում է գրանցվել հետազոտության մասնակիցների կարծիքների ամենամեծ տարանջատումը: Իշխանական կառույցների ներկայացուցիչները խորհուրդների դերը եւ գործունեությունը հիմնականում դրականորեն են գնահատել: Այդ խորհուրդների անդամներից սույն հետազոտությանը մասնակցածները նույնպես դրանց միանշանակ դրական գնահատական են տվել: Ընդդիմադիր քաղաքական գործիչները հանրային խորհուրդների նկատմամբ հիմնականում խիստ քննադատական վերաբերմունք ունեն: Քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչները, ովքեր սկզբունքորեն չեն ցանկացել մասնակցել այդ խորհուրդների աշխատանքներին, այս կամ այն պատճառով ընդգրկված չեն եղել դրանցում, միանշանակորեն բացասական կերպով են գնահատում ինքնին նման մարմինների գոյությունը՝ դրանց ներկայիս տեսքով (այս առումով որոշակի բացառություն է արվել պաշտպանության նախարարությանը կից հանրային խորհրդի, իսկ ավելի նվազ չափով՝ արդարադատության նախարարությանը կից հանրային խորհրդի վերաբերյալ): Հարցմանը մասնակցած մտավորականության ներկայացուցիչները եւ լրագրողները ՀՀ նախագահին կից հանրային խորհուրդը գնահատել են որպես զուտ ձեւական մարմին, իսկ «ոլորտային» խորհուրդների մասին տարբեր կարծիքներ են հայտնել՝ նշելով դրանց աշխատանքի թափանցիկության եւ գործելաձևի տարբերությունների մասին, ինչպես նաեւ որպես դրական օրինակ՝ առանձնացնելով պաշտպանության նախարարությանը կից հանրային խորհուրդը:

Հարցվածներից մեկը հանրային խորհուրդների աշխատանքի մասին հետեւյալ դիտարկումն է արել. «Ցավոք, հաճախ այդ խորհուրդները մի տեսակ «ճաշից հետո մանանեխ» տրամաբանությամբ են գործում: Հասարակական հնչեղություն ունեցող հարցերը դրսում սաղմնավորվում, ծավալվում, գազաթնակետին են հասնում, իսկ հանրային խորհուրդները միայն դրանից հետո, այն էլ հազվադեպ՝ անդրադառնում են դրանց»:

Հետազոտության մեկ այլ մասնակից հանրային խորհուրդների դերը համեմատել է Հանրային հեռուստատեսության հետ, նկատի ունենալով, որ դրանք գերատեսչական մարմիններ են, այլ ոչ թե՛ հանրային, կամ՝ «ձեւով հանրային են, բովանդակությամբ՝ իշխանական»:

Հարցման մասնակիցների շրջանում բավական տարածված է նաև հետեւյալ կարծիքը. «Հանրային խորհուրդները կոչված են հանրային կարծիքը տեղ հասցնելու իշխանություններին, բայց փոխարենը՝ հաճախ ուղղակի լեզիտիմացնում են իշխանության որոշումները»: «Դրանց արդյունավետությունը գրոյական է, սակայն իրենք՝ այդ խորհուրդների անմիջական անդամները, ինչ-ինչ արտոնություններից օգտվում են. ուստի կանոնադրությունը կից հանրային խորհրդի 20 անդամներն իրենց մյուս քաղաքացիներից ավելի պաշտպանված են զգում»:

Վերը նշված կարծիքից որոշակիորեն տարբերվող տեսակետներից է հետեւյալը. «Օրինակ, ՀՀ նախագահին առընթեր հանրային խորհրդում տաբուներ չկան: Երկրի ղեկավարի հետ հանդիպումները թեժ, սակայն կոռեկտ են անցնում: Եթե երկխոսության այս խողովակը դեռևս լիովին չի կայացել, ապա առնվազն կայացման փուլում է»:

ԵՐԿՆՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ մասին խոսելիս՝ հարցվածների մեծ մասը կարելու էր դեր է վերապահում ՁԼՄ-ներին: Մասնավորապես, արտահայտվում է այն կարծիքը, որ առանց ՁԼՄ-ների՝ քաղաքացիական հասարակության կողմից բարեփոխումների պարտադրումը համարյա անհնարին է: Միեւնույն ժամանակ հնչել է կարծիք, որ «քիչ չեն դեպքերը, երբ լրատվամիջոցները սադրիչի դեր են կատարում՝ հարցի լուծման մեջ առավելաբար կարելու է սենսացիան, կաղապարված մոտեցումը, այլ ոչ թե՝ հետեւողականություն են դրսևորում՝ իրականությունը, ճշմարտությունը պարզելու համար»:

Ընդհանուր առմամբ, հետազոտության շրջանակներում ՁԼՄ-ների մասին հնչեցված առավել տարածված եւ առավել հակասական կարծիքները հետեւյալն են:

ա) Հայկական ՁԼՄ-ները կենտրոնացած են իրենց գոյատեւման խնդրի վրա, այդ պատճառով էլ նրանցից չի կաշելի մեծ ակնկալիքներ ունենալ:

բ) Նրանց հետաքրքրում են միայն «թեժ» իրադարձությունները:

գ) Հայկական ՁԼՄ-ներն ազատ են եւ գրում են (հեռարձակում են) ամեն ինչի մասին:

դ) Հայաստանյան լրագրողները, որպես կանոն, կոմպետենտ չեն:

ե) Եթե անգամ ՁԼՄ-ները գրում են ոչ կառավարական սեկտորի մասին, ապա միայն այն պատճառով, որ քաղաքական լճացման պայմաններում ՀԿ-ականներն են դառնում կարելու նյութայինները:

զ) Քաղաքացիական հասարակության թեմային անդրադառնալու՝ լրագրողների միտվածությունը պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու հետաքրքրվածությամբ:

է) ՁԼՄ-ները լուսաբանում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների գործունեությունը, սակայն հիմնականում անդրադառնում են «ոչ պրոբլեմային» թեմատիկային, քանի որ գտնվում են քաղաքական կախվածության մեջ (առցանց ՁԼՄ-ներն այս առումով շահեկանորեն տարբերվում են):

Սույն հետազոտության շրջանակներում իրականացված ՁԼՄ-ների մոնիտորինգի արդյունքներն ինչ-որ առումով հաստատեցին, ինչ-որ առումով էլ հերքեցին հայաստանյան մեդիա դաշտի վերաբերյալ վերը հիշատակված կարծիքները:

ՁԼՄ-ների դիտարկված բոլոր նյութերի 11.2%-ում 2015թ.-ի մարտ ամսվա ընթացքում եղած արդիական հիմնախնդիրների լուսաբանումներում այս կամ այն կերպ հիշատակվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Առցանց մամուլում այդ ցուցանիշը կազմում է 11.1%, իսկ հեռուստատեսությունում՝ 11.4%: Մյուսներից ավելի հաճախ քաղաքացիական հասարակությանն անդրադարձել է Lragir.am-ը՝ 14.8%, այնուհետև հեռուստաալիքներն են՝ «Արմենիան»՝ 13.8%, ու «Երկիր Մեդիան»՝ 12.6%, եւ «Առավոտ» օրաթերթի առցանց տարբերակը՝ 11.9%: 10%-ից ցածր ցուցանիշ գրանցվել է միայն Հայաստանի Հանրային հեռուստատեսությունում՝ 9.4%, եւ News.am առցանց պորտալում՝ 8.8% (դիտարկված բոլոր ՁԼՄ-ների մեջ՝ ամենացածր ցուցանիշը): Միջազգային կազմակերպությունների հետ այս կամ այն ձևով համագործակցելու ՁԼՄ-ների հետաքրքրվածությունը (մասնավորապես Lragir.am-ը, «Երկիր Մեդիան», «Առավոտը» գրեթե մշտապես արտադրում են դրամաշնորհների աջակցությամբ լուսաբանվող բովանդակություն), որ հատուկ է «առաջին քայլակին», կարելի է գործոն կարելի է համարել:

ՁԼՄ-ների մոնիտորինգի ժամանակահատվածի ամենաքննարկվող թեմային (1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին) նվիրված լուսաբանումներում քաղաքացիական հասարակության ինստիտուտների առկայությունն արձանագրվել է նյութերի 8.4%-ում: «Արմենիա» հեռուստաալիքում այդ ցուցանիշը եղել է 11.0%, Lragir.am-ում՝ 10.3%, «Առավոտում» մի քիչ ավելի բարձր՝ 10%): Քաղաքացիական հասարակության ինստիտուտների հիշատակումներն առավել ընդգծված են եղել (100%) այն նյութերում, որոնք նվիրված են եղել հասարակական կազմակերպությունների մասին օրենսդրությանը: ՁԼՄ-ները ՔՀԿ-ների ամենաքիչ թվով հիշատակումներն արել են «Նաիրիս» գործարանի աշխատակիցների աշխատավարձերի պարտքերի վճարման հարցերին վերաբերող լուսաբանումներում (2.5%) եւ Հայաստանում հարկային քաղաքականության ոլորտում փոփոխությունների իրականացման նախաձեռնությունների մասին լուսաբանումներում (2.6%): Այդ փաստը հաստատում է երկրի հասարակական կյանքում աշխատավորների շահերի պաշտպանությանը կոչված գլխավոր ինստիտուտի՝ հայաստանյան արհմիությունների ունեցած չնչին դերակատարման մասին վերելում արված եզրակացությունը, եւ ՁԼՄ-ներն արտացոլել են այդ իրողությունը:

Բավական բարձր է եղել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների տոկոսը եվրոպական/եվրասիական ինտեգրման հարցերին նվիրված համատեքստում (12.2%): Մյուսներից ավելի հաճախ, այս պրոբլեմի նկատմամբ ոչ կառավարական սեկտորի վերաբերմունքը հետաքրքրել է «Երկիր Մեդիային» (24.8%), որի ցուցանիշը կրկնակի գերազանցում է դիտարկված մյուս ՁԼՄ-ների ցուցանիշը:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների հիշատակումները հիմնականում արված են չեզոք համատեքստում (751-ից 746-ի դեպքում), իսկ մնացած 5 դեպքերում

(որոնցից 4-ը՝ «Առավոտում») հիշատակումները կրել են դրական բնույթ, բացասական բնույթ ունեցող որեւէ հիշատակում չի եղել:

Միեւնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության հիշատակումները եւ ընդհանրապէս, երկխոսությանը նվիրված նյութերը շատ չեն եղել: Ըստ էության, ՁԼՄ-ները հազվադէպ են անդրադարձել սոցիալ-քաղաքական հնչեղություն ունեցող թեմաներին: Սույն հետազոտության համար ընտրված այդպիսի 6 թեմաներին դիտարկված վեց ՁԼՄ-ներից յուրաքանչյուրը միջին հաշվով անդրադարձել է օրական 10-ական անգամ (ՇԸ-ների պարագայում նկատի են առնվել այն ժամերը, երբ կատարվել է հաղորդումների մոնիտորինգը), ըստ որում դրանց կեսից ավելին վերաբերել են Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Այսինքն, ուսումնասիրված ՁԼՄ-ներում մեկ օրվա ընթացքում յուրաքանչյուր հաջորդ թեմային միջին հաշվով բաժին է ընկել մեկից պակաս հիշատակում: Քաղաքացիական հասարակության ինստիտուտները հետազոտված բոլոր 6 ՁԼՄ-ներում օրական հիշատակվել են 25 անգամ: Երկխոսության մասին, որպէս կանոն, գրեթէ նույն հաճախականությամբ են խոսել իշխանական կառույցների եւ ոչ կառավարական սեկտորի ներկայացուցիչները: Առցանց ՁԼՄ-ները զգալիորեն ավելի հաճախ են անդրադարձել քաղաքացիական հասարակության ինստիտուտներին եւ շոշափել երկխոսության թեման, քան հեռուստաալիքները: Իսկ բացահայտ առաջատարը, ինչպէս քաղաքացիական հասարակության մասին հիշատակումներով, այնպէս էլ երկխոսության թեմայի լուսաբանմամբ, դարձել է «Առավոտ» օրաթերթը: Նրան է բաժին ընկնում հետազոտված բոլոր 6 ՁԼՄ-ներում համապատասխան հիշատակումների մեկ երրորդից ավելին: «Առավոտին» եւ News.am-ին է բաժին ընկնում հետազոտության նպատակի համար ընտրված եւ կարեւորություն ներկայացնող սոցիալ-քաղաքական վեց թեմաներին կատարված բոլոր անդրադարձների կեսից ավելին: Այստեղ հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ տեղեկատվական հոսքի հագեցածության տեսանկյունից News.am-ը զգալիորեն գերազանցում է հետազոտված մյուս բոլոր ՁԼՄ-ներին, եւ հենց այդ գործոնի հաշվին այն մի քանի անգամ գերազանցել է «Առավոտին»՝ վերը նշված 6 թեմաների վերաբերյալ հիշատակումների թվով: Ըստ որում, միայն մեկ թեմա (ցեղասպանությունը) կազմել է դիտարկման թեմատիկայի վերաբերյալ News.am-ի հիշատակումների 62%-ը, այն դեպքում, երբ «Առավոտում» նման հիշատակումների թիվը 50%-ից պակաս է եղել:

Ընդհանուր առմամբ, մոնիտորինգի արդյունքներով եւ հարցման մասնակիցների հետ մամուլին վերաբերող քննարկումներից կարելի է հետեւյալ երեք հիմնական եզրակացությունների հանգել. 1) երկրի սոցիալ-քաղաքական կյանքի արդիական խնդիրները ՁԼՄ-ների գործունեության մեջ առաջնահերթություններ չեն համարվում: Համապատասխանաբար, նաեւ քաղաքականության մշակման/համաձայնեցման գործընթացներին քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը չի ստացել բավարար տեղեկատվական աջակցություն: 2) Ոչ կառավարական սեկտորի ներկայացուցիչների համար, այդուհանդերձ, ՁԼՄ-ները հասանելի են, եւ ժամանակ առ ժամանակ նրանք կարող են դրանցում հանդես գալ իրենց հուզող խնդիրների բարձրաձայնմամբ: Դա որոշակի չափով ՔՀԿ-ների բացախոսության հետեւանք է՝ ի տարբերություն ընդհանուր առմամբ հրապարակային դաշտում իշխանության ներկայացուցիչների եւ քաղաքական գործիչների դրսեւորած պասիվության:

ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ավանդույթի, նրանց գործունեության թափանցիկության բացակայությունը դրսևորվում է նաև տեղեկատվական քաղաքականության մեջ: Մի կողմից, իրացվել է որոշակի ժամանակահատվածներում կատարված աշխատանքների մասին լրագրողներին եւ հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով պետական կառույցների կողմից պարբերական միջոցառումների անցկացման, նախարարությունների եւ գերատեսչությունների՝ ինտերնետային կայքէջեր ունենալու մասին պահանջը: Մակայն նույնիսկ հետազոտությանը մասնակցած իշխանական կառույցների ներկայացուցիչներն իրենց անբավարարվածությունն են հայտնել թե մեկի, թե մյուսի նկատմամբ: Քննադատությունների նկատմամբ արձագանքը նույնպես բավարար չի համարվել: Մասնավորապես, նույնիսկ պետական հաստատություններում տեղ գտած բազմաթիվ խախտումների մասին Վերահսկիչ պալատի հաշվետվությունը որեւէ հետեւանք չի ունենում:

«Ընտրություններ էլ, որպես այդպիսին, չկան, որ ընտրողների նկատմամբ հաշվետու լինեն», - նշել է հարցվածներից մեկը՝ ամփոփելով իշխանության հաշվետվողականության մասին թեման:

ԱԶԳԱՅԻՆ ՄԵՆԹԱԼԻՏԵՏԻ՝ որպես իշխանության եւ հասարակության միջեւ երկխոսության վրա էական ազդեցություն ունեցող (հիմնականում՝ բացասական) գործոնի թեման Հայաստանում արդեն վաղուց է ակտիվորեն է քննարկվում: Ինչպես նշել են սույն հետազոտության մասնակիցները, այդ գործոնի բաղկացուցիչներն են կազմում վառ արտահայտված խմբային շահերը, ներհամայնքային կապերը, որոնք չեն նպաստում թափանցիկ եւ մասնակցային հանրային քաղաքականությանը: Միեւնույն ժամանակ, հարցվածների մի մասը կարծում է, որ հասարակության՝ որոշ չափով փակ լինելը ոչ թե ազգային, այլ խորհրդային ժառանգության արդյունք է: Նրանք խնդիրը համարում են ոչ թե ազգային մենթալիտետը, այլ հանրային մասնակցության մշակույթի բացակայությունը: Նրանցից մեկը նշել է. «Մեր ազգային առանձնահատկությունները գիտակցաբար երկար ժամանակ, համառորեն, չարամտորեն արմատավորվում են իշխանությունների կողմից: Այդ ամենը միջին վիճակագրական քաղաքացուն պահում են յուրատեսակ չափավոր խավարամտության մակարդակի վրա, ինչի օգնությամբ մեր իշխանությունները եւ ընդդիմությունը բավական վստահորեն զբաղվում են իրենց հայրենակիցների գիտակցության մանիպուլյացիայով: Հենց որ խորտակվեն այդ ազգային կարծրատիպերը, այդ ժամանակ էլ ի հայտ կգա ընդհանուր առմամբ հասարակության եւ պետության առավել խելամիտ կառավարման հնարավորություն:

Ինչեւէ, դա կոչենք ազգային մենթալիտետ, թե սոցիալական առանձնահատկություն, հետազոտության մասնակիցները նշել են որոշ հատկանիշներ, որոնք հատուկ են իշխանությունների եւ քաղաքացիների միջեւ առկա հարաբերություններին.

- «Մենք իշխանությունների հանդեպ հարգանք չունենք, բայց այդուհանդերձ, նրանից ինչ-որ բան ստանալու ակնկալիք ունենք»:

- «Ուժային, ազգային անվտանգության մարմինները բացառիկ իրավունք ունեն իրենց գործունեությունը գաղտնի պահելու, եւ օրենքները նրանց չեն վերաբերում»:
- «Ազգային կարծրատիպերը խոչընդոտ են քաղաքացիական հասարակության, երկխոսության, ինչպես նաեւ՝ առհասարակ նորարարության համար»:
- «Հայերի մեծ մասը պատրաստակամորեն իր կարծիքը հայտնում է մասնավոր, նեղ միջավայրերում, իսկ բաց հանրային տիրույթում այն արտահայտելուց խուսափում է, մտածելով, թե դա կարող է օգտագործվել իր դեմ: Քանի որ Հայաստանում լյուստրացիա տեղի չունեցավ, իսկ նախկին իշխողների ժառանգները մեծ հաշվով այսօր էլ շարունակում են իշխել, մենք մեր պասսիվ վարքը համարում ենք ավանդական, անհիմն «էթնիկացնում ենք» այն»:
- «Հայերի ազգային մրցունակության հիմքը հարմարվելու ունակությունն է՝ իր դրական եւ բացասական իմաստներով: Մերոնք շատ արագ են հարմարվում նոր, անծանոթ պայմաններին, ինչը լուրջ մրցակցային առավելություն է: Սփյուռքի գոյությունն ինքնին դրա ապացույցն է: Իսկ սեփական երկրում հարմարվում ենք անարդարությանը, այնպիսի հանրային հարաբերությունների, որոնցից զարգացում, բարեփոխումներ, պայքար իրավունքների համար՝ այս ամենը չի բխում: Հայերի հարմարվելու կողը պետք է ճիշտ հունի մեջ դրվի՝ օրինակ, հարմարվել օրենքի գերակայությանը, ինչը մեզ մոտ լավ է ստացվում այլ երկրներում, սակայն առայժմ՝ ոչ հայրենիքում»:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ ՇԱՏԵՐՆ արդյունավետ երկխոսության հեռանկարները կապում են արտաքին քաղաքական միջավայրի ազդեցությունների հետ: Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցություններին զուգահեռ՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը դառնում էր ավելի առարկայական: Նման գործընթացի բացակայության պայմաններում ՀՀ իշխանություններից դժվար է սպասել որեւէ նախաձեռնություն երկխոսության ուղղությամբ: ԱԳ շրջանակներում այս երկխոսությունը շարունակում է պարտադրանք դիտվել, բայց ԵՄ-ՀՀ հարաբերություններում այսօրվա անորոշությունը երկիրը դուրս է պահում արդիականացման օրակարգից: Ինչպես նշել է հարցվածներից մեկը, «Եթե սայլով ես երթեւեկում, նավթի համաշխարհային գները քեզ վրա չեն ազդում»:

Մյուս կողմից, ինչպես նշվել է հետազոտության շրջանակներում քննարկումներից մեկում, դոնորների, միջազգային հանրության ճնշումը ոչ միշտ է նպաստում իրական բարեփոխումներին: Կան օրինակներ, երբ օրենսդրության կամ ռազմավարության փոփոխությունը տեղի է ունենում ավելի հաճախ, քան պետք է, եւ հասարակությունը չի հասցնում տեսնել դրանց պրակտիկ իրագործման պտուղները:

2013-ի սեպտեմբերին ինտեգրացիոն կուրսի որոշակի փոփոխությունը ամեն դեպքում չպետք է հուսահատեցնի երկխոսությանը ձգտողներին: «Իշխանությունների հետ պետք է համագործակցենք բոլոր պայմաններում», - ասում է հարցվածներից մեկը, - «Օրինակ, մշակութային ժառանգության հարցերի շուրջ փաստաթղթեր էինք մշակում՝ ելնելով եվրոպական ստանդարտներից: Միացանք ԵՏՄ-ին ու սկսեցինք ուսումնասիրել նույն

ուրորտի ռուսաստանյան օրենսդրությունը, որը, պարզվեց, այս դեպքում ավելի առաջադիմական էր: Նշված փաստաթուղթը առանց կորուստների հարմարեցրինք դրան»:

Այդպիսի լավատեսությունը չեն կիսում մասնավորապես ոչ ֆորմալ քաղաքացիական ակտիվիստները: Վերջիններս 2013 եւ 2015 թվականներին տարբեր են: Ըստ նրանց, քաղաքացիական հասարակությունը առաջընթաց ապրեց, սկսեց ակտիվանալ 2009-2010 թվականներից: Դա առաջին հերթին պայմանավորված էր ԱլԳ-ով, ինչպես նաև՝ քաղաքացիական նախաձեռնությունների ծավալումով: Իշխանությունները ստիպված էին, թեեւ ձեւական, բայց գնալ երկխոսության: Իսկ այն ժամանակվանից, երբ ՀՀ իշխանությունները «ինքնատրամադրվեցին» ԵՏՄ-ին, համագործակցության հնարավորությունները աստիճանաբար վերանում են, ՀԿ սեկտորի աշխատանքը ձեւական է դառնում: 2013-ի եւ 2015-ի քաղաքացիական նախաձեռնություններն իրենց ազդեցությամբ ու զանգվածայնությամբ տարբեր են՝ ոչ հոգուտ նոր ժամանակների...

Համաձայն որոշ հարցվածների, քաղաքացիական ակտիվիզմի անկումը մասամբ պայմանավորված է նաև փողոցային բողոքների նկատմամբ իրավապահ մարմինների ավելի կոշտ վերաբերմունքով: Միեւնույն ժամանակ կարծիք է հնչել, որ իրավապահ մարմինների ճնշումները կարող են ստիպել հասարակությանը լռել: Սակայն այն հասարակությունը, որը լողում է բարեկեցության մեջ, արհամարհում է սոցիալական խնդիրները հանուն իր բարեկեցության: Իսկ քանի որ Հայաստանում բացակայում է սոցիալական պաշտպանվածության գործոնը, հասարակությանը հնարավոր է ճնշել միայն ժամանակավորապես:

Որպես մխիթարական փաստ է հիշատակվում մարդու իրավունքների եւ ազատությունների ուրորտում Երեւանի հարաբերությունների պահպանումը Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի հետ, չնայած ԵՏՄ-ին միանալու հանգամանքին: Ռուսաստանում, ինչպես հայտնի է, սահմանափակում են ոչ կառավարական կազմակերպությունների արտասահմանյան ֆինանսավորումը, նրանց գրանցելով որպես «օտարերկրյա գործակալների»: Հայաստանը շարունակում է բավական մեղմ քաղաքականությունը ՔՀԿ-ների նկատմամբ եւ հակադրության մեջ չի մտնում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ֆինանսավորող արտասահմանյան կազմակերպությունների հետ: Մանավանդ որ, Հայաստանի իշխանություններն իրենք էլ են ակնկալում ստանալ Արեւմուտքի ֆինանսական աջակցությունը:

Վերը հիշատակված պայմանները թույլ են տալիս յուրացնել արտասահմանյան զարգացած երկրներում երկխոսության փորձը: Ըստ որում, հետազոտության մասնակիցներից շատերը չեն ընդունում արդարացումներն այն մասին, որ թափանցիկ հանրային քաղաքականություն ստեղծելու համար հայաստանյան հասարակությանը ժամանակ է պետք.«Ժամանակն է դուրս գալ երեխայի կերպարից, ուրիշ երկրներում 20 տարում ամեն ինչի հասել են»:

Հարցվածների մի մասը, մասնավորապես, հիշատակել է հանրաքվեների՝ որպես երկխոսության մեխանիզմի, շվեյցարական փորձը: Շատերն արտահայտվել են

Հայաստանում դրա կիրառման օգտին, սակայն հնչել է նաև կարծիք, որ երկիրը միջոցներ չունի այդքան հաճախակի հանրաքվեներ անցկացնելու համար:

Սակայն ցանկացած, անգամ ամենաառաջավոր փորձ, ինչպես նշել են հետազոտության որոշ մասնակիցներ, կարող է վարկաբեկվել, երբ հասարակության մեջ իշխանությունների հանդեպ վստահության սուր դեֆիցիտ կա: Իսկ իշխանություններն իրենց հերթին, անկախ քաղաքացիական հասարակությունն ընկալում են որպես իրենց համար պոտենցիալ վտանգ ներկայացնող երեւույթ:

Հենց այդ գործոնների վերացման վրա է անհրաժեշտ կենտրոնացնել ջանքերը՝ քաղաքականության համաձայնեցման/մշակման ուղղությամբ գործունե կոնսուլտություն հաստատելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.
ԽՈՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Մուրեն Քրմոյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
2. Անահիտ Եսայան, ՀՀ քաղաքաշինության նախարարի մամուլի քարտուղար
3. Սամվել Ֆարմանյան, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ
4. Մարգարիտ Եսայան, ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀԿ խմբակցության անդամ, Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ
5. Արա Սաղաթեյան, «Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
6. Աղվան Վարդանյան, ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՅԴ խմբակցության քարտուղար
7. Ստեփան Մարգարյան, ՀՀ ԱԺ պատգամավոր, ԲՀԿ խմբակցության անդամ, Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
8. Անուշ Սեդրակյան, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության փոխնախագահ
9. Դանիել Իոանեսյան, «Իրազեկ քաղաքացի» ՀԿ-ի ծրագրերի համակարգող
10. Գեորգ Տեր Գաբրիելյան, «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի գործադիր տնօրեն
11. Գրիգորի Գրիգորյանց, «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպության երեխայի շահերի պաշտպանության բաժնի ղեկավար
12. Արմեն Ալավերդյան, «Ունիսոն» ՀԿ-ի ղեկավար
13. Սոնա Այվազյան, «Թրանսփարանսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն
14. Արամ Սաֆարյան, քաղաքագետ, «Ինտեգրում եւ զարգացում» ՀԿ-ի ղեկավար
15. Գեղամ Բաղդասարյան, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
16. Արամ Աբրահամյան, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

17. Հրանուշ Խառատյան, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու
18. Գեորգ Պողոսյան, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտի տնօրեն
19. Հովիկ Մուսայելյան, «Մինփսիս Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն
20. Ռուբեն Բաբայան, Երեւանի պետական տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ տնօրեն

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

Ֆոկուս խումբ 1. ոլորտային ՀԿ-ների ներկայացուցիչներ

1. Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
2. Արտակ Կիրակոսյան, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
3. Սարգիս Սեդրակյան, «Ֆերմերային շարժում» ՀԿ
4. Արամ Գաբրիելյան, «Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ
5. Գայանե Պողոսյան, Փոքր եւ միջին բիզնեսի զարգացման հիմնադրամ
6. Սոնա Դարբինյան, «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» ՀԿ

Ֆոկուս խումբ 2. Պետական կառույցներին կից հանրային խորհուրդների, մտավորական եւ լրատվական շրջանակների ներկայացուցիչներ

1. Վարուժան Սեդրակյան, ՄԻՊ Բոնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի հասարակական փորձագիտական խորհուրդ, «Հայաստանի մանկական ասոցիացիա»
2. Լիանա Դոյդոյան, ՀՀ կառավարության աշխատակազմին կից Բաց կառավարման գործընկերության աշխատանքային խումբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
3. Հայկուհի Հարությունյան, ԱՆ հանրային խորհուրդ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
4. Ժաննա Ալեքսանյան, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպության ղեկավար, լրագրող, իրավապաշտպան
5. Գեղամ Վարդանյան, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի խմբագիր
6. Գեղամ Մանուկյան, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն

Ֆոկուս խումբ 3. ՀԿ-ների ցանցերի եւ դաշինքների ներկայացուցիչներ

1. Լիլիթ Զիտյան, Քաղաքացիական հասարակության գործընկերության ցանց, ՕԲՍՖԱՄ-Հայաստան

2. Հասմիկ Ասլանյան, ՀՀ ռազմավարական ծրագրերի քաղաքացիական համագործակցության ցանց, «Շողեր» ՀԿ
3. Էդիթ Սողոմոնյան, «Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա», Հայաստանում Էրազմուս+ ծրագիր
4. Էլեն Հարությունյան, Երեխաների պաշտպանության ցանց, ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ
5. Թամար Աբրահամյան, «Հանրային ցանց», «Արագա» ՀԿ
6. Նաիրա Առաքելյան, Հակակոռուպցիոն կենտրոնների ազգային ցանց, Արմավիրի զարգացման կենտրոն

Ֆոկուս խումբ 4. Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի անդամներ

1. Միքայել Հովհաննիսյան, ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի համակարգող, «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի ծրագրերի տնօրեն
2. Կարեն Զիլինգարյան, «Սպառողների խորհրդատվական կենտրոն» ՀԿ նախագահ, ՀԱՊ 2-րդ աշխատանքային խմբի համակարգող
3. Հերիքնազ Հարությունյան, ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ քարտուղարության գործադիր տնօրեն
4. Ինգա Զարաֆյան, «Էկոլուր» ՀԿ-ի նախագահ, ՀԱՊ 3-րդ աշխատանքային խմբի համակարգող
5. Թեմիկ Խալափյան, «Տրտու» ՀԿ-ի նախագահ, ՀԱՊ 4-րդ աշխատանքային խմբի համակարգող
6. Լիլիթ Հայրյան, ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ քարտուղարության հասարակայության հետ կապերի մասնագետ

Ֆոկուս խումբ 5. Ոչ ֆորմալ նախաձեռնությունների, շարժումների մասնակիցներ

1. Հայկակ Արշամյան
2. Մարիատ Պետրոսյան
3. Գայանե Առուստամյան
4. Զարուհի Հովհաննիսյան
5. Մուրեն Սաղաթելյան
6. Աննա Շահնազարյան

**ՀԱՎԵԼՎԱԾ 3.
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՄԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ**

Հայաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (h1), «Արմենիա» հեռուստաալիք, «Երկիր Մեդիա» հեռուստաալիք, Aravot.am, Lragir.am, News.am
1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		12021				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
	751	Դրական	Բացասական	Չեզոք		
		5	0	746		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	1098	92	1006		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	333	44	289		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	374	42	332		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	3	3	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	87	23	64		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	51	13	38		
Ընդամենը		1946	217	1729		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	150	12	119	120	6	13
Ընդամենը		150	119	120	6	13

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ
Հայաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (հ1), «Արմենիա» հեռուստաալիք, «Երկիր Մեդիա» հեռուստաալիք
1-31 մարտի, 2015թ.**

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		2214				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
	208	Դրական	Բացասական	Չեզոք		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	384	32		352	
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	66	9		57	
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	79	12		67	
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	2	2		0	
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	30	10		20	
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	10	0		10	
Ընդամենը		571	65		506	
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	64	3	54	57	4	5
Ընդամենը		64	3	54	4	5

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ
Հայաստանի հանրային հեռուստատեսության Առաջին ալիք (h1)
1-31 մարտի, 2015թ.**

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)			
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		917			
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը			
		Դրական	Բացասական	Չեզոք	
	64	0	0	64	
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում		
			Կա	Չկա	
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	202	15	187	
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	30	3	27	
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	22	3	19	
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	1	1	0	
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	9	3	6	
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	3	0	3	
Ընդամենը		267	25	242	
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը			
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ
	15	1	14	13	1
Ընդամենը		15	14	13	1

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ «Արմենիա» հեռուստաալիք 1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		650				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
		Դրական	Բացասական	Չեզոք		
79		1	0	78		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	82	9	73		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	24	3	21		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	27	2	25		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	1	1	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	9	5	4		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	2	0	2		
Ընդամենը		145	20	125		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	24	1	19	21	2	3
Ընդամենը	24	1	19	21	2	3

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ
«Երկիր Մեդիա» հեռուստաալիք
1-31 մարտի, 2015թ.**

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		647				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
		Դրական	Բացասական	Չեզոք		
	65	0	0	65		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	100	8	92		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	12	3	9		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	30	7	23		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	0	0	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	12	2	10		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	5	0	5		
Ընդամենը		159	20	139		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	25	1	21	23	1	1
Ընդամենը		25	21	23	1	1

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ
Aravot.am, Lragir.am, News.am
1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		9807				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
	543	Դրական	Բացասական	Չեզոք		
	543	4	0	539		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	714	60	654		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	267	35	232		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	295	30	265		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	1	1	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	57	13	44		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	41	13	28		
Ընդամենը		1375	152	1223		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	86	9	65	63	2	8
Ընդամենը		86	65	63	2	8

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ

Aravot.am
1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		2753				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
		Դրական	Բացասական	Չեզոք		
	271	4	0	267		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	269	27	242		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	129	14	115		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	114	11	103		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	1	1	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	19	7	12		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	14	5	9		
Ընդամենը		546	65	481		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջև քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
	57	1	44	45	1	4
Ընդամենը		57	44	45	1	4

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ**

Lragir.am
1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		1356				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
		Դրական	Բացասական	Չեզոք		
96		0	0	96		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սուկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	97	10	87		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	56	11	45		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	93	12	81		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	0	0	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	12	1	11		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	11	4	7		
Ընդամենը		269	38	231		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
11		2	7	7	0	3
Ընդամենը		2	7	7	0	3

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՑՄԱՆ ՇՈՒՐՁ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՋԼՄ-ՆԵՐՈՒՄ**

News.am

1-31 մարտի, 2015թ.

Բովանդակության կատեգորիա		Ընդամենը (միավոր)				
Հետազոտված նյութերի ընդհանուր քանակը		5698				
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումներ պարունակող նյութերը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հիշատակումների բնույթը				
		Դրական	Բացասական	Չեզոք		
176		0	0	176		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսության մասին նյութերի թեմատիկան		Թեմատիկային անդրադարձների քանակը	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների սուկայությունը նյութերում			
			Կա	Չկա		
1.	1915թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ	348	23	325		
2.	Հայաստանի եվրաինտեգրում, Հայաստան-ԵՄ հարաբերություններ	82	10	72		
3.	Հայաստանի եվրասիական ինտեգրում	88	7	81		
4.	ՀԿ-ների մասին օրենսդրության փոփոխության նախաձեռնություն	0	0	0		
5.	Հայաստանի հարկային քաղաքականության փոփոխության նախաձեռնություն	26	5	21		
6.	«Նաիրիտ» գործարանի աշխատավարձի պարտքերի վճարման հարց	16	4	12		
Ընդամենը		560	49	511		
Իշխանությունների եւ քաղաքացիական հասարակության միջեւ քաղաքականության համաձայնեցման շուրջ երկխոսությանը նվիրված նյութեր	Երկխոսությանը նվիրված նյութերի ընդհանուր քանակը	Երկխոսությանը նվիրված նյութերում տեղեկատվության աղբյուրը				
		Լրագրող	Իշխանության ներկայացուցիչ	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ	Միջազգային, դոնոր կազմակերպության, դիվանագիտական առաքելության ներկայացուցիչ	Այլ
18		6	14	11	1	1
Ընդամենը		18	14	11	1	1

